

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
N ՍՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ - 14/01-02

ք. Կապան

03 հունիսի 2014 թ.

«Շ Սյունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու» մի կողմից և «Ռազ-Բիլդինգ» ՍՊԸ ի դեմս տնօրեն Ա. Թևատրոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 «Պատվիրատուն», հանձնարարում է, իսկ «Կատարողը», ստանձնում է ՀՀ Սյունիքի մարզի «Գորիս համայնքի թիվ 2 դպրոցի վերանորոգման», և «Մեղրի համայնքի թիվ 1 դպրոցի տանիքի վերանորոգման», նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության աշխատանքների կատարումը (այսուհետև՝ «Աշխատանք»), համաձայն սույն պայմանագրի անրաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական ընտրագիր գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական ընտրագիր գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. «Պատվիրատուն», իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել «Կատարողի», կողմից կատարվող «Աշխատանքի», ընթացքը և որակը՝ առանց միջամտելու «Կատարողի», գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական ընտրագիր գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել «Կատարողից», վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել «Կատարողից», վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը. եթե «Կատարողն», էականորեն խախտել է սույն պայմանագիրը: «Կատարողի», կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական ընտրագիր գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել «Կատարողին»,:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում «Կատարողին», վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 «Պատվիրատուից», պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ «Պատվիրատուի», կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել **Աշխատանքի** կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել **„Պատվիրատուին„**:

3. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են **„Պատվիրատուի„** և **„Կատարողի„** միջև հանձնման ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

„Կատարողը„ Աշխատանքի կատարման ավարտից 3/երեք/ աշխատանքային օրվա ընթացքում **„Պատվիրատուին„** է հանձնում կատարված **Աշխատանքի** մասին իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված **Աշխատանքը** համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և **„Պատվիրատուն„**

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) **„Կատարողի„** նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 **„Պատվիրատուն„** հանձնման ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3/երեք/ օրյա ժամկետում **„Կատարողին„** է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ **Աշխատանքը** չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. Պայմանագրի գինը

4.1 Սույն պայմանագրով **„Կատարողի„** կատարման ենթակա **Աշխատանքի՝ „Գորիս համայնքի թիվ 2 դպրոցի վերանորոգման„** և **„Մեղրի համայնքի թիվ 1 դպրոցի տանիքի վերանորոգման„** նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության աշխատանքների կատարման գինը կազմում է 1705000,0 (մեկ միլիոն յոթ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է **„Կատարողի„** կողմից իրականացվող բոլոր տիպի ծախսերը և հարկային պարտավորությունները, հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները՝ ընդ որում.

- **„Գորիս համայնքի թիվ 2 դպրոցի վերանորոգման„** նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության աշխատանքների կատարման գինը կազմում է 500000,0 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
- **„Մեղրի համայնքի թիվ 1 դպրոցի տանիքի վերանորոգման„** նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության աշխատանքների կատարման գինը կազմում է 1205000,0 (մեկ միլիոն երկու հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և **„Կատարողն„** իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ **Պատվիրատուն** նվազեցնելու այդ գինը:

4.2 **Պատվիրատուն** կատարված **Աշխատանքի** դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները **„Կատարողի„** հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20 ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 րանկային օրվա ընթացքում): Բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված **Աշխատանքի** դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25 ր:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 **„Կատարողը,,** պատասխանատվություն է կրում **Աշխատանքի** կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող **Աշխատանք** կատարելու յուրաքանչյուր դեպքում **„Կատարողից,,** գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամրոց հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված **Աշխատանքի** կատարման ժամկետը խախտելու դեպքում **„Կատարողից,,** յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված **Աշխատանքի** գնի 0,05 (զրո ամրոց հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են **Աշխատանքը** կատարելու արդյունքում **„Կատարողին,,** վճարման ենթակա գումարների հետ:

5.5 **„Պատվիրատուի,,** կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում **„Պատվիրատուի,,** նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամրոց հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը **Կողմերին** չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամրոցությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների **„Աշխատանքի,,** դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում **Կողմերի** ստորագրման պահից և գործում է մինչև **Կողմերի** սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, **„Կատարողը,,** ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ **„Կատարողին,,** հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, **„Պատվիրատուն,,** իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որովմ **„Պատվիրատուն,,** չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով **„Կատարողի,,** համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ **„Կատարողը,,** պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել **„Պատվիրատուի,,** կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ **„Պատվիրատուի,,** ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն **Կողմերի** փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**„Մեղրի համայնքի թիվ 1 դպրոցի տանիքի վերանորոգման,,
 աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ու
 փորձաքննության իրականացման**

1. Ընդհանուր դրույթներ		
1.1	Աշխատանքի անվանումը	„Մեղրի համայնքի թիվ 1 դպրոցի տանիքի վերանորոգման,, աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ու փորձաքննության իրականացման
1.2	Նշանակությունը (խնդիրը)	„Մեղրի համայնքի թիվ 1 դպրոցի տանիքի վերանորոգման,, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և փորձաքննության իրականացման աշխատանքներ
2. Նախագծային առաջադրանք		
2.1 Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումն իրականացնել ՀՀ-ում գործող ՇՆ և Կ ի համաձայն: Ապահովել նախագծային աշխատանքների կատարումը համաձայն դպրոցական շենքի տեխնիկական վիճակի մասին եզրակացության:		
2.2 Աշխատանքների իրականացման փուլերը՝ աշխատանքային նախագծին համապատասխան կազմել ամփոփ նախահաշիվ՝ այդ թվում օբյեկտային և լոկալ նախահաշիվներ: Կազմել աշխատանքների կատարման Ծավալաթերթ-նախահաշիվ /5-ական օրինակ թղթային և էլեկտրոնային/, փորձաքննության եզրակացություն:		
2.3 Աշխատանքի տեսակը՝ Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննություն աշխատանքի իրականացում:		
Աշխատանքների կատարման ժամկետը		
Սկիզբը		Ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից		30.06.2014թ.

**„Գորիս համայնքի թիվ 2 դպրոցի վերանորոգման,,
 աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ու
 փորձաքննության իրականացման**

1. Ընդհանուր դրույթներ		
1.1	Աշխատանքի անվանումը	„Գորիս համայնքի թիվ 2 դպրոցի վերանորոգման,, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ու փորձաքննության իրականացման աշխատանքների

1.2	Նշանակության ունը (խնդիրը)	„Գորիս համայնքի թիվ 2 դպրոցի վերանորոգման, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և փորձաքննության իրականացման աշխատանքներ
-----	----------------------------------	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------

2. Նախագծային առաջադրանք

2.1 **Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումն իրականացնել** ՀՀ-ում գործող ՇՆ և Կ -ի համաձայն: Ապահովել նախագծային աշխատանքների կատարումը համաձայն դպրոցական շենքի տեխնիկական վիճակի մասին եզրակացության:

2.2 **Աշխատանքների իրականացման փուլերը**՝ աշխատանքային նախագծին համապատասխան կազմել ամփոփ նախահաշիվ՝ այդ թվում օբյեկտային և լոկալ նախահաշիվներ: Կազմել աշխատանքների կատարման Ծավալաթերթ-նախահաշիվ /5-ական օրինակ թղթային և էլեկտրոնային/, փորձաքննության եզրակացություն:

2.3 **Աշխատանքի տեսակը**՝ Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննություն աշխատանքի իրականացում:

Աշխատանքների կատարման ժամկետը

Սկիզբը	Ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	30.06.2014թ.

„Պատվիրատու,,

„Կապալառու,,

„ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմ,, ՊԿՀ
ք. Կապան Գ. Նժդեհ 1
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900312000046
ՀՀ 09415375

« Ռազ-Բիլդինգ » ՍՊԸ
ք. Կապան, Օրջոնոկիձեի 2-րդ նրբ, 36տ.
«Արդշինինվեսթանկ» ՓԲԸ «Կապան» մ/ճ
ՀՀ 080192096



Կ Ճ Ա Ր Մ Ա Ն Փ Ա Մ Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

/Հազար դրամ/

Աշխատանքի անվանումը	Աշխատանքի պայմանագրային գինը	Ֆինանսավորման գումարը ՀՀ պետական բյուջեից՝ ըստ 2014թ ամիսների										Ընդամենը											
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր		Նոյեմբեր	Դեկտեմբեր									
„Գործի համայնքի թիվ 2 դպրոցի վերանորոգման,, ՆՏՓ-ի մշակում և փորձաքննություն	500.0									500.0	500.0	500.0	500.0	500.0	500.0	500.0	500.0	500.0	500.0	500.0	500.0	500.0	
„Մեղրի համայնքի թիվ 1 դպրոցի վերանորոգման,, ՆՏՓ-ի մշակում և փորձաքննություն	1205.0										1205.0	1205.0	1205.0	1205.0	1205.0	1205.0	1205.0	1205.0	1205.0	1205.0	1205.0	1205.0	1205.0
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	1705.0										1705.0	1705.0	1705.0	1705.0	1705.0	1705.0	1705.0	1705.0	1705.0	1705.0	1705.0	1705.0	1705.0

Ծանոթություն. Կճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

„Պատվիրատու,“

ՀՀ Սյունիքի մարզպետարան

Ք Կապան, Գ. Նժդեհ 1

ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձարտարան

900317 000046

44445 002415 375

„Կատարող,“

«Ռազ-Բիդինգ» ՍՊԸ

Ք. Կապան, Օրջուհիների 2-րդ նրբ. Տուն 36

«Արդշինհան» Կապան մ/Գ



Մ. Լազարյան

Աստրոսյան

Հավելված N1
 ՀՀ ֆինանսների նախարարի
 2013թ. օգոստոսի 6-ի N673 Ն հրամանի

Հավելված N 3
 03 հունիսի 2014թ կնքված
 ՍՍ-ԲԸԱՀ ԱՇՁԲ 14/01 02 պայմանագրի

„Պատվիրատու,,
 ՀՀ Սյունիքի մարզպետարանի
 աշխատակազմ
 Հասցե՝ ք. Կապան Գ. Նժդեհ 1
 ՀՀ ՖՆ Կենտրոնական
 գանձապետարան
 Հ/Հ 900312000046
 ՀԿՀՀ 09415375

„Կատարող,,
 „Ռազ-Բիլդինգ,, ՍՊԸ
 ք. Կապան, Օրջոնոկիձևի 2 ըդ նրբ.
 Տուն36
 „ԱՇԻԲ,, ՓԲԸ „ Կապան,,
 մասնաճյուղ
 Հ/Հ 247080192096
 ՀԿՀՀ 09417061

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N__
Հ Ա Ն Ձ Ն Մ Ա Ն - Ը Ն Դ ՈՒ Ն Մ Ա Ն

« ____ » 2014թ.

Պայմանագրի անվանումը -
 Պայմանագրի կնքման ամսաթիվը --- 03 հունիսի 2014թ.
 Պայմանագրի համարը --- **ՍՍ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/01-02**

„Պատվիրատուն,, ի դեմս՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Ավետիսյանի, և „Կատարող,, ի դեմս՝ „Ռազ-Բիլդինգ,, ՍՊԸ տնօրեն Ա. Թևատրոսյանի հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները (այսուհետև աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին:

Պայմանագրի շրջանակներում „Կատարող,, 2014թ -ից մինչև

2014 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Կատարված աշխատանքների համառոտ նկարագրությունը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազ.դրամ/	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
1	2	3	4	5
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքները հանձնեց՝

Աշխատանքներն ընդունեց՝

Ա. Թևատրոսյան

Ռ. Ավետիսյան

(ստորագրություն) (ԱԱՀ)

(ստորագրություն) (ԱԱՀ)